

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԴԵՊՔ

(Գի դը-Մօպասանի)

Բաւական մեծ թուով սեղանակիցներ նստած էին ամա-
րանոցում, կլոր սեղանի շուրջը, որի վրայ չարուած էին փոք-
րիկ թասեր և բաժակներ: Նոր էին վերջացրել մի սարսափելի
դէպքի պատմութիւն, որ պատահել էր նախընթաց օրը:

—«Սարսափելի» բառը իր լիակատար նշանակութեամբ
չը պէտք է շատ յաճախ գործածել,—ասաց այդտեղ նստած գե-
ներալ Ժ.—մեռելների, արիւնահեղ պատերազմների, նոյն իսկ
մեծ մասամբ ամենակատաղի յանցանքների մասին եղած պատ-
մութիւնները կատարելապէս արժանի չեն այդ անունաւ: Ահա
ես կը պատմեմ ձեզ մի դէպք, որի մէջ անձամբ մասնակցութիւն
եմ ունեցել և որ ինձ բացատրեց այդ խօսքի իսկական նշա-
նակութիւնը:

Դէպքը տեղի ունեցաւ 1870 թուականի պատերազմի ժա-
մանակ: Մենք նահանջում էինք: Մեր զօրքի դրութիւնը յուսա-
հատական էր: Շատ էին յետ մնացողները, որոնք ընդունակու-
թիւն չունէին առաջ շարժուելու. տանջւում էին սովից, ցրտից,
սարսափելի յոգնածութիւնից... Հազիւ-հազ էին շարժւում...

Այդ ժամանակ, ճանապարհից քիչ հեռու, ես նկատեցի եր-
կու ժանդարմների, որոնք բռնել էին մի օտարոտի մարդու
թևերից, մի փոքրիկ, ծեր, անմօրուս մարդու, որ, իսկապէս,
զարմանալի դէմք ունէր:

Ժանդարմները որոնում էին մի օֆիցէրի, կարծելով թէ
լրտես են բռնել:

«Լրտես» բառը մի ակնթարթում տարածուեց յետ մնացած-
ների մէջ, և գերին իսկոյն շրջապատուեց: Մէկն աղաղակեց.
«Պէտք է դրան հրացանի բռնել»: Եւ բոլոր զինուորները, որոնք
մինչև այդ ժամանակ ընկնում էին ուժասպառութիւնից և կա-
րողանում էին ոտքի վրայ մնալ միմիայն յենուելով հրացանի
վրայ, յանկարծ զգացին կատաղի բարկութեան մի ոյժգին
ցնցում, որից ամբոխը վայրագութեան է հասնում և պատրաստ
է ամեն տեսակ յանցանք ու գաղանութիւն գործելու:

Ես ուզում էի խօսել: Ես բատալիօնի հրամանատար էի, բայց այդտեղ այլևս իշխանաւոր չէին ճանաչում: Ինձ էլ կը խըփէին, եթէ ես մտածէի հակառակուել:

Ժանդարմներից մէկն ինձ ասաց.

— Երեք օր է, ինչ սա հետեւում է մեզ: Ամենքից ուզում է տեղեկութիւններ դուրս քաշել թնդանօթածիզ զօրքերի մասին: Ես փորձեցի հարց ու փորձ անել այդ էակից.

— Ի՞նչ ես անում դու այստեղ: Ի՞նչ է հարկաւոր քեզ: Ինչո՞ւ ես գնում զօրքի ետեքից:

Նա մի քանի խօսք փնթփնթաց մի անհասկանալի բարբառով:

Դա, իսկ որ, մի տարօրինակ մարդ էր, նեղ ուսերով, յօնքերը կիտած: Նա այնքան շփոթուեց իմ առջև, որ ես այլևս չէի կասկածում. մի լրտես էր դա: Տեսքով նա շատ հասակաւոր էր և շատ թույլ: Ինձ նայում էր պարզահոգութեամբ:

Չորս կողմում կանչում էին.

— Կախել, կախել:

Ես դիմեցի ժանդարմներին.

— Դուք պատասխանատու էք դերու համար...

Ես դեռ չէի վերջացրել խօսքս, երբ ուժեղ կերպով հրեցին ինձ և ես ընկայ: Ես տեսայ, թէ ինչպէս այդ մարդուկին մի ակնթարթում բռնեցին կատաղած զինուորները: Նրան ցած զլորեցին և սկսեցին ծեծել անգթաբար. ապա քարշ տուին ճանապարհի ծալքով և գցելին մի ծառի տակ: Նա ընկաւ ձիւնի մէջ համարեա մեռած:

Մի ակնթարթում նրան հրացանի բռնեցին: Գնդակահար անելով նրան, զինուորները նորից լցնում էին հրացանները և նորից գնդակահար անում զազանների վայրագութեամբ: Նրանք վիճում էին միմեանց հետ դիակի մօտով անցնելու հերթի համար, որպէսզի գնդակ խփեն նրան, ինչպէս անցնում են դադողի մօտով՝ օրհնած ջուր սրսկելու համար:

Բայց յանկարծ մի աղաղակ լսուեց.

— Պրուսացիները, պրուսացիները...

Եւ ես լսեցի զլուխը կորցրած և փախչող ամբոխի յուսահատական աղմուկը:

Աստանդական մարդու վրայ պարպած հրացանների ձայները սաստիկ վախ էին պատճառել, որ խեղճահան արին հէնց այդ դահիճներին: Նրանք չըմբռնեցին, որ իրարանցման պատճառը հէնց իրանք են, թողեցին փախան եւ անյայտացան խաւարի մէջ:

Ես մնացի մենակ դիակի մօտ երկու ժանդարմների հետ,

որոնք ինձ մօտ մնացին ծառայութեան պարտաւորութիւնից դրդուած:

Նրանք բարձրացրին այն մտային զանգուածը, որ տրորուած էր, ծուէն-ծուէն դարձած, արիւնոտ:

—Պէտք է դրան խուզարկել, ասացի նրանց:

Ես գրպանիցս հանեցի մօմէ լուցկիների տուփը: Մի գինուորը լոյս էր անում միւսին: Ես կանգնած էի երկուսի մէջտեղը:

Դիակը խուզարկող ժանդարմը գեկուցանում էր.

—Հագած է կապոյտ բլուզա, սպիտակ շապիկ, վարտիկ, կօշիկներ...

Առաջին լուցկին հանգաւ. վառեցին երկրորդը: Դուրս հանելով գրպանները, նա շարունակեց.

—Եղջիւրից շինած դանակ, չի՛ք աղլուխ, ծխախոտի աման, բարակ թուկի կտոր, մի պատառ հաց...

Երկրորդ լուցկին վերջանում էր: Վառեցին երրորդը: Ժանդարմը, դիակը երկար շօշափելուց յետոյ, յայտնեց.

—Էլ չը կայ:

—Մերկայրէք դրան, ասացի. գուցէ մի բան գտնենք մարմնի վրայ:

Եւ որպէսզի երկու գինուորներն էլ գործ տեսնեն, ես ինքս սկսեցի լոյս անել: Լուցկիի արագ հանգչող լոյսի մէջ ես տեսայ ինչպէս են հանում շորերը միմեանց ետեւից, մերկացնելով դեռ տաք, մեռած մարմնի այդ անձեւ արիւնային բեկորը: Յանկարծ նրանցից մէկն ասաց.

—Գրո՞ղը տանէ... Պարոն հրամանատար, կի՛ն է...

Ես չեմ կարող ասել ձեզ, թէ թախիծի իրավիսի օտարոտի եւ սուր զգացմունք շարժուեց իմ սրտի մէջ: Ես չէի կարողանում հաւատալ, ուստի ծունկ չորեցի ձիւնի մէջ, մօի այդ կտորի առաջ, որ, նայեմ. այն դա կին էր:

Երկու ժանդարմները անշարժ և չլկլուած, սպասում էին որ ես ասեմ առաջին խօսքը:

Բայց ես չը գիտէի՝ ի՞նչ մտածեմ, ի՞նչ ենթադրեմ:

Այն ժամանակ աւագ ժանդարմը դանտաղ կեպով արտասանեց.

—Գուցէ նա որոնում էր իր որդուն, որ գինուոր էր թնդանօթածիփ գօրքի մէջ և որի մասին նա լուր չուներ:

Միւսը պատասխանեց.

—Շատ կարելի է:

Ես իմ կեանքում շատ սարսափելի բաներ եմ տեսել, բայց այստեղ չը կարողացայ չարտասուել: Ես զգացի այդ մեռածի

առաջ, այն ցուրտ ու մութ տափարակի մէջ, այժմ սարահուած
անյայտ կնոջ դադանիքի առաջ այն, ինչ անուանում է բառովս՝
«սարսափ»...

Ժ Ո Ղ Ո Վ

(Գրչի հանաք)

Հաւաքուել էինք բազմաթիւ հայեր
Մի շատ կարեւոր, մեծ գործի համար.
Ժողովում Կիրքը—մեզ նախագահ էր,
Ուշուցը—հռետր, Ոխը—հարսուղար:

Եւ ակնթարթում մենք իրար անցանք,
Քիչ մնաց բանն հասնէր տուողը միտքին...
Վերջն էլ ժողովը թողինք, հեռացանք,
Մազի չափ մի շահ չը բերած գործին...

Միայն դուրս գալիս, դրոսն մօտ անձայն
Տեսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած.
Արդարութիւնն էր այդ հալածական,
Որին նախագահն ժողով չէր թողած...

ԱԼ. ՇԱՏՈՒՐԵԱՆ